

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 21.04.2022թ.
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել

Հեռ. (+374 10) 510 510,
www.inecobank.am

Բիզնես օվերդրաֆտ

Վարկառուի նկարագիր	ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր		
Վարի արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ԵՎՐՈ
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԴԵՊՅՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ:			
Նվազագույն գումար	5,000,001	10,000	10,000
Առավելագույն գումար*	30,000,000	65,000	55,000
*Օվերդրաֆտ տրամադրվում է վերջին 12 ամիսների միջին բանկային հաշվի գուտ կրեդիտային շրջանառության մինչև 40% չափով: Նշված սահմանաչափերից ավել գումարի Օվերդրաֆտ հնարավոր է տրամադրել դրամական միջոցների կամ անշարժ գույքի գրավով ապահովության դեպքում:			
Ժամկետ	Մինչև 12 ամիս		
Տարեկան անվանական տոկոսադրույք	18-21%	11-17%	11-17%
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԵԼ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ:			

Հաշվի բացման վճար (եթե հաճախորդը Բանկում չունի հաշիվ)	Համաձայն «Բանկային ծառայությունների սակագներ բիզնես հաճախորդների համար» փաստաթղթի
Հաշվից վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար	Համաձայն «Բանկային ծառայությունների սակագներ բիզնես հաճախորդների համար» փաստաթղթի
Հաշվի սպասարկման լրացուցիչ միանվագ վճար	Օվերդրաֆտի սահմանաչափի 1.0%
Հաշվի սպասարկման լրացուցիչ միանվագ վճարը հաշվարկվում է վարկային պայմանագիրը ստորագրելու ամսաթվին և գանձվում է օվերդրաֆտի տրամադրման պահին: Արտարժույթով վարկային գծերի հաշվի սպասարկման լրացուցիչ միանվագ վճարը գանձվում է ՀՀ դրամով և հաշվարկվում է պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված համապատասխան փոխարժեքով:	
Պարտադիր վճարման ենթակա գումար	Քաղվածքում արտացոլված օգտագործված Օվերդրաֆտի 50% և վճարման ենթակա տոկոսագումարները վճարվում են քաղվածքը ստանալու ամսվա մինչև քսանհինգերորդ օրը: Պարտադիր վճարման ենթակա գումարների չվճարման կամ մասնակի վճարման, ինչպես նաև պայմանագրով նախատեսված այլ պայմանների ոչ պատշաճ կատարման դեպքում Բանկը միակողմանի կարող է Օվերդրաֆտը վերածել մինչև 12 ամիս ժամկետով հավասարաչափ մարումներով վարկի: Վարկի տոկոսադրույքը սահմանվում է Օվերդրաֆտի տոկոսադրույք գումարած 2 տոկոսային կետ, եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից:
Վարկի վաղաժամկետ մարման տուգանք	Չի սահմանվում
Ժամկետանց պարտավորությունների մարում	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Բանկն իրավունք ունի հաշվարկվել տույժ չմարված գումարի 0.13% ¹ -ի չափով՝ սկսած ուշացման առաջին օրվանից:
Ապահովվածություն	Հիմնական գրավ՝ <ul style="list-style-type: none"> • Դրամական հոսքեր Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ գրավ՝ <ul style="list-style-type: none"> • Անշարժ գույքի գրավ • Հիմնական միջոցների գրավ • Տրանսպորտային միջոցների գրավ • Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ • Դեբիտորական պարտքի իրավունքի գրավ • Երաշխիքներ, երաշխավորություններ • Դրամական միջոցների գրավ

¹ Նշված տոկոսադրույքը ենթակա է փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխման դեպքում:

	<ul style="list-style-type: none"> • Թանկարժեք մետաղների (իրերի) գրավ • Բաժնետմասի գրավ • Այլ գույք
<p>ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՎՃԱՐԵԼ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՓՈԽԱՐԵՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՅՆԱՐԱՎՈՐ Է՝ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ՉՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:</p>	
Վարկ/գրավի արժեք հարաբերակցության առավելագույն ցուցանիշ	Գրավի իրացվելի արժեքի 75%-ը
Ապահովագրություն	<p>Բանկի որոշմամբ կարող է պահանջվել՝</p> <ul style="list-style-type: none"> • գրավադրված գույքի ապահովագրություն վարկի մնացորդի կամ գույքի շուկայական արժեքի չափով և/կամ • այլ ռիսկերի ապահովագրություն
Տրամադրման եղանակ	Անկանխիկ (հաճախորդի՝ Բանկում բացված հաշվի միջոցով)
Մարման եղանակ	Օվերդրաֆտի մարումը կատարվում է բանկային հաշվին միջոցներ մուտքագրելով
Տոկոսագումարների հաշվարկման կարգ	Տոկոսագումարները հաշվարկվում են յուրաքանչյուր օր փաստացի մնացորդի նկատմամբ: Վերջնական վերահաշվարկը կատարվում է ընթացիկ ամսվա վերջին օրը:
Վարկի պայմանների վերանայման միջնորդավճար²	15,000 ՀՀ դրամ
Վարկի ապահովություն հանդիսացող գրավի առարկայի փոփոխման (այդ թվում գրավի սեփականատիրոջ փոփոխության համար) միջնորդավճար³	15,000 ՀՀ դրամ
Երաշխավորության փոփոխություն	15,000 ՀՀ դրամ

² Միևնույն հաճախորդի գծով 2-րդ և հաջորդ պայմանագրերով վարկերի պայմանների վերանայման միջնորդավճարը սահմանվում է 5,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան հանրագումարային 40,000 ՀՀ դրամ:

³ Յուրաքանչյուր պայմանագրի համար:

Գրավի ազատման միջնորդավճար^{4***}	15,000 ՀՀ դրամ
Բանկի կողմից տրամադրվող այլ համաձայնությունների միջնորդավճար	10,000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման որոշման կայացման ժամկետ	1-7 աշխատանքային օր անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի ստացման օրվանից, որից հետո առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է հաճախորդին
Վարկի տրամադրման ժամկետ	1-7 աշխատանքային օր վարկի տրամադրման որոշումը կայացնելուց հետո անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում
Վարկի տրամադրման մասին որոշման վավերականություն	30 օր
Վարկավորման ոլորտներ	ՀՀ տնտեսության բոլոր ոլորտները, բացի հետևյալ գործունեությունից՝ <ul style="list-style-type: none"> • զենքի և ռազմական սարքավորումների արտադրություն կամ առևտուր, խաղատներ, բուքմեյքերական գրասենյակներ, արտաբժույթի առուվաճառք, ներդրումներ արժեթղթերում, • այլ ոլորտներ, որոնք հակասում են ՀՀ օրենսդրությանը կամ սահմանափակված են Բանկի վարկային քաղաքականությամբ և/կամ Բանկի կողմից կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորություններով:
Վարկավորման նպատակ	Կարճաժամկետ իրացվելիության խնդիրներ

Ճանաչություն՝

1. Բանկն իրավասու է հաճախորդի հետ պայմանագիր կնքել սույն փաստաթղթով սահմանված սակագներից և պայմաններից տարբերվող այլ սակագներով և պայմաններով:
2. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:** Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:
3. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՃՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ**

⁴ Սակագինը գանձվում է տվյալ գրավային ապահովությամբ պայմանագրի գծով պարտավորություններ ունենալու դեպքում:

ՍԱՅՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԻՆԵԿՈԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (www.inecobank.am) «ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ԷԶՈՒՄ:

4. Հաշվին մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա` Հաճախորդի կողմից Բանկին Վարկի պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում` միջնորդավճարների, տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի սույն կետով սահմանված մարումն իրականացնել այլ հաջորդականությամբ:

5. **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ`** ՏՈԿՈՍԱԳՈՒԲՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒԲՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ՎԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՅՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ:

6. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ`** ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ` ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

7. Վարկի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Նախքան ֆինանսական վերլուծության իրականացումը`

իրավաբանական անձանց/ ԱՁ համար

- Իրավաբանական անձի կանոնադրությունը (բոլոր փոփոխություններով):
- Իրավաբանական անձի/ԱՁ ղեկավարների և հիմնական սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթերը:
- Բաժնետիրական ընկերությունների դեպքում սեփականատերերի ցուցակը Կենտրոնական Դեպոզիտարիայից:
- Իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը վարկ ստանալու/լիզինգով հիմնական միջոց ձեռք բերելու վերաբերյալ:
- Իրավաբանական անձի/ԱՁ-ի Շահութահարկի հաշվետվություն կամ Շրջանառության հարկի հաշվետվություն:
- Գրավադրվող գույքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ:

Գրավատուից/երաշխավորից պահանջվող փաստաթղթեր`

- Ֆիզիկական անձ գրավատուի/երաշխավորի դեպքում` անձը հաստատող փաստաթուղթ,
- Իրավաբանական անձ գրավատուի/երաշխավորի դեպքում` ղեկավարների և մասնակիցների անձը հաստատող փաստաթղթեր, կանոնադրությունը բոլոր փոփոխություններով, Բաժնետիրական ընկերությունների դեպքում սեփականատերերի ցուցակը Կենտրոնական Դեպոզիտարիայից, ինչպես նաև իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու/երաշխավորություն տալու վերաբերյալ,
- Բանկի համար ընդունելի անկախ գնահատող ընկերությունների կողմից կազմված գրավի առարկայի գնահատման հաշվետվություններ/ գրավի առարկայի ակտ,
- Մատակարարի (վաճառողի) փոխանցման հաշիվ/ կոմերցիոն առաջարկ,
- Հաճախորդի ֆինանսական վերլուծության իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր և տեղեկատվություն:
 - Վարկային հայտի հաստատումից հետո`
- Գրավադրվող գույքի սեփականության հիմքերը,
- Տեղեկանք իրավասու մարմնի կողմից գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ,

- Գրավատու ֆիզիկական անձի ամուսնության/ամուսնալուծության վկայական (ամկայության դեպքում), կնոջ/ամուսնու անձը հաստատող փաստաթղթերը, մահվան վկայական (ամկայության դեպքում),
 - Ապահովագրության պահանջի ամկայության դեպքում ապահովագրության համապատասխան փաստաթղթերը:
8. Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ՝
- ամնվազն 3 ամիս անընդմեջ գործող եկամտաբեր բիզնեսի ամկայություն⁵
 - դրական կամ չեզոք վարկային պատմություն
 - գործունեության թափանցիկություն
 - բավարար եկամուտներ
 - սեփականության ամկայություն
 - գրավի և/կամ երաշխավորության ամկայություն
9. Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ՝
- վարկը մարելու համար անբավարար եկամուտներ
 - հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում
 - բացասական վարկային պատմություն
 - հաճախորդի եկամտի աղբյուրի ձիսկային ոլորտ:
10. ՎԱՐԿԵՐԸ ՁԱԱԿԵՐՊՎՈՒՄ ԵՆ ԲԱՆԿԻ ԲԻՉՆԵՍ ԵՎ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ: ԲԱՆԿԻ ԲԻՉՆԵՍ ԵՎ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՑԱՆԿԻՆ ԿԱՐՈՂ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ-Ի ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.inecobank.am:
11. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից «ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ (նման պահանջի ամկայության դեպքում):
12. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
13. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
14. Վարկի ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ Ինեկոբանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am, և Բանկի՝ 8-րդ կետում նշված մասնաճյուղերում:
15. Բանկային հաշվի բացման և սպասարկման ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ Ինեկոբանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am, և Բանկի՝ 8-րդ կետում նշված մասնաճյուղերում:

⁵ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում բացառության կարգով իրականացվում է նաև սկսնակ բիզնեսի վարկավորում:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

ԴՈՒՔ ԻՐԱԿՈՒՄՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԻՆԵԿՈՒՄՆԿ ՓԲԸ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱԿԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՐԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

Ծառայություն	Սակագին
Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում և Էլ. փոստով	Անվճար
Հաշվի քաղվածքի տրամադրում Փոստով (ամսական)	2,000 ՀՀ դրամ + փոստային առաքման ծախսերը
Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում ⁶	<ul style="list-style-type: none"> մինչև 1 տարվա վաղեմության՝ 1,000 ՀՀ դրամ 1 տարուց ավել վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ
Տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում (առավելագույնը 5 տարի վաղեմությամբ)	<ul style="list-style-type: none"> Բանկային հաշվի վերաբերյալ և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում - 3,000 ՀՀ դրամ⁷ Առևտրական հարցման պատասխան և այլ տիպի կամ վաղեմության տեղեկատվության տրամադրում – 10,000 ՀՀ դրամ

Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով

1. Բանկն առաջարկում է ԻնտեկՕնլայն, ԻնտեկՄոբայլ և այլ Համակարգեր՝ ինտերնետով, հեռախոսազանգի կամ SMS հաղորդագրության և կապի այլ միջոցներով բանկային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև տեղեկություններ ստանալու հնարավորություն՝ առանց Բանկ այցելելու: Համակարգերը ժամանակակից և հարմարավետ գործիքներ են, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել Հաշիվներով կատարվող գործառնությունները, ներկայացնել վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ, ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել տվյալ Համակարգում Բանկի կողմից մատչելի դարձված ֆինանսական և այլ գործառնություններ: Համակարգերի տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Կայքում կամ

⁶ Փոստային առաքման դեպքում լրացուցիչ կգանձվի փոստային առաքման ծախսը:

⁷ SWIFT հաղորդագրության պատճենը Ինտեկ Օնլայն համակարգի միջոցով տրամադրվում է անվճար:

համապատասխան Համակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

2. Համակարգերը հասանելի են Բանկում համապատասխան հաշիվներ ունեցող Հաճախորդների համար: Հաճախորդին համապատասխան Համակարգից օգտվելու սարքի, օգտագործողի անվան, գաղտնաբառի, ինչպես նաև Հաճախորդին համակարգից օգտվելու հնարավորություն այլ կերպ ընձեռելը նշանակում է, որ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Համակարգի տրամադրման պայմանագիր՝ Հիմնական պայմաններին համապատասխան: Համակարգի տրամադրման պայմանագրի անբաժանելի մասն են Հիմնական պայմանները, Սակագները, համապատասխան Համակարգի օգտագործման ուղեցույցները, Բանկի ինտերնետային կայքերի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:
3. Կողմերն ընդունում են, որ Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է Հաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Համակարգերի միջոցով Հաճախորդին բանկային ծառայություններ մատուցելու համար:
4. Կողմերն ընդունում են, որ Հաճախորդին նույնականացնելուց հետո Համակարգ մուտք գործելու համար Հաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Հաճախորդի կողմից Համակարգ մուտք գործելուց հետո Համակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Հաճախորդի կողմից: ԻնեկոՕնլայն Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:
5. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Համակարգ մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել Համակարգերն օգտագործելիս այլ անձանց կողմից Համակարգ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար:
6. ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄոբայլ և այլ Համակարգերից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թղթեններ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել Հաճախորդին տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:
7. Բանկն օգտագործում է Համակարգերով տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ: Այդուհանդերձ, Հաճախորդը Համակարգերն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգերի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգերի օգտագործումից բխող Հաճախորդների տվյալների բացահայտման և Հաճախորդների ցանկացած այլ կորուստների և վնասների համար:
8. Համակարգերը տրամադրվում են դրանց հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն են տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Հաճախորդը տեղյակ է, որ կախված Վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, Քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Հաճախորդներին առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված Հաճախորդի համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել

Համակարգերով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը, (ներառյալ՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:

9. Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:
10. Բանկն իրավունք ունի Համակարգի միջոցով կատարվող գործառնությունների համար նախատեսել սահմանաչափեր, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականներն ու ցուցումները կատարելիս իրականացնել Հաճախորդի ինքնուրույն հավելյալ ստուգում՝ պահանջելով լրացուցիչ ձայնային կամ այլ հաստատում: Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Համակարգ մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ Սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված վճարները չկատարելու, սույն Հիմնական պայմանների պահանջները խախտելու, ինչպես նաև Հաճախորդի նույնականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքերում:
11. Համակարգի տրամադրման պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերություններ

Անվանում	Հասցե	Հեռախոսահամար	Վեբ կայք/Էլ. հասցե
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, 0010 ք. Երևան, Հանրապետության և 51, 53, տարածք՝ 47, 48, 50	(+37410) 59 21 21	info@ingoarmenia.am http://www.ingoarmenia.am
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան Վ. Սարգսյան 10, տարածք 110 «Պիացցա Գռանդե» Բիզնես Կենտրոն	(+ 374 60) 50 00 60	nairi@nairi-insurance.am http://www.nairi-insurance.am
«ՌԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, 0014, Կոմիտասի պող. 62 շ., 93-93/1:	(+ 374 60) 27 57 57	info@reso.am http://www.reso.am
«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արամի 3	(+ 374 60) 54 00 00 (+374 10) 58-00-00	info@silinsurance.am http://www.silinsurance.am
«ՌՈՍԳՈՍՏՐԱՆ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Յյուսիսային	(+37410) 50 07 70	http://www.rgs.am

	պողոտա 1 (Նորո ԲԿ-ի 4-րդ հարկ)		
--	-----------------------------------	--	--

Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպություններ

Անվանում	Հասցե	Հեռախոսահամար	Վեբ կայք/Էլ. հասցե
ՕԼԻՎԵՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ	ք. Երևան 0001, Թումանյան 8, 215- 216 սեն.	(+374 10) 54 27 40 (+374 10) 54 27 50 (+374 10) 54 27 60 (+374 10) 54 27 70 (+374 91) 54 27 50 (+374 77) 54 27 50 (+374 55) 54 27 50	info@olivergroup.am http://www.olivergroup.am
ԿՈՍՏ ԿՈՆՍԱԼՏ ՍՊԸ	Հայաստան, 0010, Երևան, Խանջյան փող., 13/2 շենք	(+374 10) 54 48 82 (+374 91) 47 19 25	info@cost.am cost@consultant.com http://www.cost.am
ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Ք. Երևան, Արցախի պողոտա 23/6 շենք տաղավար 50 /Տուն Դեպոյի հարևանությամբ/	(+374 10) 43 22 76 (+374 96) 43 22 76	amintasgroup@mail.ru
ՎԻ ԷՄ- ԱՐ ՓԻ ՍՊԸ	Հայաստան, 0010, Երևան Վարդանանց փող. փակուղի, 8 շենք	(+374 10) 58 87 97 (+374 99) 58 87 97	vm-rp@mail.ru http://www.vm-rp.am
ԱՓԹԱՅՍ ՍՊԸ	Հայաստան, 0002, Երևան Եկմալյան փող., 6 շենք, 3-րդ հարկ («Բիզնես Պալեի» շենքում)	(+374 60) 53 53 71 (+374 98) 53 53 14 (+374 94) 71 37 10	-